

1.4.2. Բնակչության կենսամակարդակ եվ աշխատավարձ¹²

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 12 վիճակագրական աշխատանքներից 11-ը (142001-142012 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

142012 ծածկագրով աշխատանքը, համաձայն ՀՀ ԱՎԾ և ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի, Ռուսաստանի Դաշնության վիճակագրության պետական կոմիտեի միջև ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրման ծրագրի իրականացման մասին փոխըմբռնման հուշագրի աշխատանքների կատարման ժամանակացույցի, կկատարվի 2005թ. ընթացքում (III եռամսյակ):

142001-142003 ծածկագրերով 3 վիճակագրական աշխատանքները վերաբերում են բնակչության դրամական եկամուտներին և ծախսերին: Դրանք իրականացվել են ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 3 աշխատանքների (142001-142003 ծածկագրեր) մասով հաշվարկվել են.

1. ամսական կտրվածքով՝

բնակչության դրամական եկամուտները և ծախսերը

2. եռամսյակային կտրվածքով՝

բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը

3. տարեկան կտրվածքով՝

բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը

142004-142012 ծածկագիրը կրող աշխատանքներն առավելապես նպատակ ունեն ուսումնասիրելու բնակչության եկամուտները (ՀՀ մարզերով և ըստ տնտեսության ճյուղերի ու հատվածների)՝ աշխատանքի վարձատրության, կազմակերպությունների կողմից աշխատուժի պահպանման վրա կատարված ծախսերի տեսանկյունից:

Ընդ որում, տվյալ վիճակագրական աշխատանքների համար վիճակագրական տեղեկություններ հավաքագրվել և մշակվել են 6 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (1 ամսական, 2 եռամսյակային և 3 տարեկան պարբերականությամբ):

Աշխատանքներ են տարվել աշխատանքի վիճակագրության ոլորտում Տնտեսական գործունեության ընդհանուր դասակարգչից ՏԳՏԴ-ին անցման ուղղությամբ:

¹² Տես՝ Ծրագիր, Հավելված I: